2024-2025 ուստարվա առաջնահերթ խնդիրներից է եղել համընդհանուր ներառական կրթության ներդրմանն զուգընթաց իրականացնել կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված աշխատանքներ: Մեծածավալ աշխատանքներ են տարվել այս խնդրի ուղղությամբ, համագործակցելով Շիրակի ՏՄԱԿ տարբեր մասնագետների հետ դաստիարակները հմտորեն լուծել են իրենց առջև դրված խնդիրները: Շիրակի տարածքային մանկավարժհոգեբանական աջակցության կենտրոնին հայտ է ներկայացվել՝ երեք սանի առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման նպատակով: ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից իրականացված դիտարկումների արդյունքում երեք սան գնահատվել են որպես առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սկսել ենք համագործակցել ՏՄԱԿ-ի մասնագետների հետ:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման համար կազմվել է սաների ԱՈՒՋՊ, ըստ այդմ, կազմակերպվել են բոլոր աշխատանքները:

2024-2025 ուստարում մանկավարժների շրջանում կազմակերպված վերապատրաստումների արդյունքում ,դաստիարակները ձեռք են բերել նոր գիտելիքներ՝ ժամանակակից մեթոդական հնարներ ու միջոցներ կիրառելու գործում, որոնք նպաստել են ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Կարևորվել է հատկապես առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը ճիշտ պլանավորելու և կազմակերպելու համար կազմակերպված սեմինարները, դասընթացները որոնց

արդյունքում դաստիարակները ձեռք են բերել անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և համատեղ աշխատանքի շնորհիվ ունեցել են առաջընթաց:

2024-2025 ուստարվա ընթացքում բոլոր խմբերում իրականացվել են ուսումնա-դաստիարակչական աշխատանքների՝ կանոնակարգային տարբեր պահերի, գործունեության տարբեր ձևերի, օրվա 2-րդ կեսի և պարապմունքների դիտարկումներ:Դիտարկումների արդյունքում բոլոր խմբերում դաստիարակներն աշխատել են պահպանելով օրվա կանոնա-կարգային պահերը, գործունեության տարբեր ձևերը և պարապմունքներն անցկացվել են ըստ պլանավորման՝ թեմատիկ շաբաթներով:

Յուրաքանչյուր շաբաթ ստուգվել են դաստիարակների, երաժշտական ղեկավարի ուսում-նադաստիարակչական աշխատանքների պլանավորումները: Կազմակերպվել են խորհրդ-դատվություններ, մեթոդ ժամեր հետևյալ թեմաներով՝ <<Խաղ-տեխնոլոգիաների դերը նախա-դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործում>>, << Ավազաթե-րապիայի ազդեցությունը նախադպրոցականի հոգեկան զարգացման վրա >>,<<Դեկորատիվ կիրառման աշխատանքը ժամանակակից մանկապարտեզում>>, << Մաթեմատիկական տարրա-կան պատկերացումների ուսուցումը հեքիաթի միջոցով>>, որոնք նպաստել են մանկավարժական աշխատողների մասնագիտական հմտությունների ու կարողությունների կատարելագործմանը:

Բոլոր խմբերում իրականացվել են ծնողների հետ գործնական հանդիպումներ հետևյալ թեմաներով՝<<Խաղն ու երեխայի մտավոր զարգացումը 2-3 տարեկանում>>, <<Ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխայի վրա>>, << Կամակորություն, անհանգստու-թյուն>> , <<Կարգապահություն>>, <<Գերակտիվություն>>, <<Մեղքն ուրիշի վրա գցելը>>, << Ինչպես պատրաստվել դպրոցին>>:

Հանդիպումներն անցկացվել են ինտերակտիվ, մոդուլային տարբերակներով՝ սառույց կոտրող վարժություններով,որոնց ընթացքում ծնողները հաճույքով մասնակցել և ակտիվություն են ցուցաբերել: Հաշվի առնելով ծնողների զբաղվածությունը՝ կազմակերպվել են նաև վեբինարներ՝ հետևյալ թեմաներով՝ <<Ագրեսիվ վարքագիծ>>,<<Ինչպես օգնել երեխաներին սթրեսային իրավիճակներում>> , <<Ձեր ստեղծագործող երեխան>>,<<Երբ երեխան սիրում է հակաճառել>>:

Կազմակերպվել են անհատական և խմբային խորհրդատվություններ ծնողների համար հետևյալ թեմաներով՝<<Բաժանման տագնապ>>2-3 տարեկանում, << Զայրույթի պոռթկում>>, <<Մանկական վախեր>>,<< Առաջին և ամենակարևոր ուսուցիչը>>,<<Քնելու դժվարություն-ները>>,<<Երբ երեխան դժվարությամբ է ընկերանում>>,<<Ցածր ինքնագնահատական>>, որոնք իրենց դրական ազդեցությունն են ունեցել ծնողական կրթության վրա:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատությունն ունի գործող մեթոդկաբինետ, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: | ✔ | |
| բ. ուսումնական հաստատությունն ունի<br>✓ մարզադահլիճ,<br>✓ միջոցառումների անցկացման դահլիճ<br>✓ այլ հատուկ ուսումնական խմբասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ լրացուցիչ կրթական ծրագրերի համար (նկարչական խմբակ և այլն), որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, և ուսումնադիդակտիկ նյութերով. | | |

Կից՝ նկարներ և գույքի հագեցվածության ցուցակներ:
Հաստատությունում կա մեկ դահլիճ, որն օգտագործվում է որպես և միջոցառումների դահլիճ, և մարզադահլիճ:
Մանկապարտեզի դահլիճը հագեցած է մարզական անհրաժեշտ գույքով:

1.Դաշնամուր

2.Հեռուստացույց

3.DVD

4.Երաժշտական գործիքներ՝ շվի, դափ, թմբուկ

5. Երաժշտական ծրագրային ստեղծագործությունների տեսաերիզներ

6.Դրոշակներ, գունավոր թաշկինակներ, ֆիզկուլտուրայի փայտիկներ

7.Տեսաժապավեններ,մանկական երաժշտական սկավառակներ

8.Ծննդյան տոների մանկական մեղեդիների սկավառակներ

9.մարմնամարզական աստիճան ուղղահայաց

10. Մարմնամարզական ներքնակներ

11. Մարմնամարզական օղակներ

12.Թռիչք բարձրության ձողափայտեր

13. Մազլցման պարաններ

14. Ռետինե գնդակներ

15.Մարմնամարզական նստարաններ

16.Շարժական խաղերի կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներ

17.Էստաֆետային դրոշակներ

18.Տարբեր խրախուսական պարագաներ

19.Բասկետբոլային ցանցեր

20.Բուլավաներ

21.Պարկեր

22.Մարմնամարզական պատ

23.Աթոռակ բարձրանալու և  իջնելու  համար







7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՆՕՐԻՆՈՒՄ

| Ցուցանիշ | | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|---|
| ա. սան - մանկավարժ հարաբերությունը. | Սան / Մանկավարժ | 90/9<br>10 | 101/10<br>10 | 104/10<br>10.4 |
| բ. սան - սպասարկող անձնակազմ հարաբերությունը. | Սան / Սպաս. անձնակազմ. | 90/9<br>10 | | |
| գ. սան - վարչական անձնակազմ հարաբերությունը. | Սան / Վարչ. անձնակազմ | 90/4<br>22,5 | 101/10<br>10 | 104/10<br>10.4 |
| դ. խմբերի միջին խտությունը. | | 22,5 | 25 | 26 |
| ե. մեկ սանի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը. | | 303901 | 303901 | 333 546 |
| զ. մանկավարժի միջին աշխատավարձը. | | 92111 | 92111 | 107 504 |
| է. վարչական աշխատողների միջին աշխատավարձը. | | 82380 | 121115 | 120 695 |
| ը. սպասարկող կազմի միջին աշխատավարձը. | | 48975 | 48975 | |
| թ. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը. | | 0 | 0 | 0 |
| ժ. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը. | | 0 | 0 | 0 |
| ժա. սոցիալապես անապահով ընտանիքներից սաների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը.<br>*(Եթե այո, ապա նշել այդ ծրագրերը):* | | 0 | 0 | 0 |
| ժբ. դրամաշնորհային և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ներդրումների տարեկան չափը. | | 0 | 0 | 0 |
| ժգ. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | | 21 560 700 | 21 560 700 | 25 463 621 |

| | | | |
|---|---|---|---|
| ժդ. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | 898 200 | 894 274 | 1 299 584 |
| ժե. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. | 0 | 265 000 | 365 000 |

*Խմբերի թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Խմբերի թիվը | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Վաղ տարիքի I | - | - | - | % |
| Վաղ տարիքի II | - | - | - | % |
| Կրտսեր I | 1 | 1 | 1 | % |
| Կրտսեր II | 1 | 1 | 1 | % |
| Միջին | 1 | 1 | 1 | % |
| Ավագ | 1 | 1 | 1 | % |
| Տարատարիք | - | - | - | % |
| Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ | - | - | - | - |
| Ընդամենը՝ | 4 | 4 | 4 | Հաստատուն |

Այս և հաջորդող բոլոր աղյուսակներում անհրաժեշտ է նկարագրել փոփոխությունների դինամիկան՝ մեկնաբանել աճի կամ նվազման պատճառները: Մանկապարտեզում խմբերի թվաքանակը վերջին տարիների ընթացքում փոփոխությունների չի ենթարկվել: Որպես կանոն, յուրաքանչյուր նոր ուսումնական տարի գործում է 4 խումբ՝ կրտսեր 1-ին, կրտսեր 2-րդ, միջին և ավագ:

*Ըստ խմբերի սաների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Սաների թիվը | 2022-2023 | 2023-2024 | 2024-2025 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Վաղ տարիքի I | - | - | - | % |
| Վաղ տարիքի II | - | - | - | % |
| Կրտսեր I | 20 | 21 | 17 | -17% |
| Կրտսեր II | 28 | 31 | 32 | +5% |
| Միջին | 20 | 31 | 29 | -5% |
| Ավագ | 22 | 18 | 26 | +45%, |
| Տարատարիք | - | - | - | |
| Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ | - | - | - | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը՝ | 90 | 101 | 104 | 3% աճ |

*Ընդհանուր տվյալներ սաների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Ցուցանիշ | 2022-2023 | 2023-2024 | 2024-2025 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ | 90 | 95 | 96 | +6%/+1,5% |
| Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա օգոստոսի 20-ի դրությամբ | 86 | 98 | 96 | +15%/-2% |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սաների թիվը | 50 | 63 | 48 | +26%/-1,5% |
| Ուսումնական տարվա ընթացքում սաների բացակայությունների միջին թիվը | 313 | 169 | 190 | -46%/ +12%, |
| Ուսումնական տարվա ընթացքում ազատված սաների թիվը | 47 | 52 | 31 | +11% /-39%, |

Վերլուծել սաների թվաքանակի փոփոխության պատճառները, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

2022-2023 ուսումնական տարում ևս սաների ընդհանուր թվի աճ է գրանցվել, որը պայմանավորված է եղել <<ՀՀՇՄ Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատություններ երեխաներին անվճար ընդգրկելու և ծնողական վճարների սահմանված չափի նկատմամբ զեղչեր կիրառելու կարգը հաստատելու մասին>> ՀՀՇՄ Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 256-Ն որոշմամբ, որի համաձայն մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար տրամադրվել է փոխհատուցում՝ 4000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2023-2024 ուսումնական տարում սաների ընդհանուր թվի աճ է գրանցվել, որը պայմանավորված է եղել Արցախից տեղահանված հայրենակիցների երեխաներին մանկապարտեզում ընդգրկվելու, ինչպես նաև զինծառայող ծնողների երեխաներին պետական բյուջեի միջոցների հաշվին մանկապարտեզ անվճար ընդգրկվելու հանգամանքներով:Սակայն այս ուստարվա ընթացքում ազատված սաների թվի աճ է գրանցվել, որը պայմանավորված է եղել Արցախից տեղահանված հայրենակիցների բնակության վայրերը փոփոխելու հանգամանքով:

2024-2025 ուստարում բոլոր տարիքային խմբերը համալրված են եղել,բացի կրտսեր 1-ին տարիքային խումբը: Այս ուստարում բացակայությունների թվի աճ է գրանցվել,որը պայմանավորված է եղել վիրուսային հիվանդությունների աճի, ինչպես նաև ունեցել ենք ջրծաղիկով հիվանդացության դեպքեր:

## 8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ

| Ցուցանիշ | | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|---|
| ա. սաների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից գրավոր ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ. | Թիվը / Տոկոսը | 6/90% | 6/95% | 7/95% |
| բ. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ,էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սաների տոկոսը. | Թիվը / Տոկոսը | 6/25/90% | 6/25/90% | 7/25/90% |
| գ.ծնողական խորհրդի կազմում ԿԶԱՊԿ ունեցող սաների ծնողների թիվը եւ տոկոսը | Թիվը / Տոկոսը | 0/0% | 0/0% | 0/0% |
| դ. ծնողական խորհրդի կողմից հաստատության գործունեության վերաբերյալ ներկայացված կարծիքը քննարկվում է աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու ժամանակ. | Այո / Այո | Այո | Այո | Այո |
| ե. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները. | 2024-2025 ուստարում ծնողական խորհրդի հանդիպումները կազմակերպվել են եռամսյակը մեկ անգամ, որոնց ընթացքում քննարկվել են մանկապարտեզի գործունեության, երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, կազմակերպման, նյութատեխնիկական բազայի համալրման, մանկավարժների խրախուսման, ծնողների և հաստատության միջև կապերի ամրապնդման, երեխաների դաստիարակչական աշխատանքներում ծնողների ներգրավման, երեխաների ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն աջակցման, սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու վերաբերյալ հարցեր: | | | |
| զ. ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը. | Լավ: 99%<br>Մասամբ: 0.1%<br>Տեղեկացված չեն: 0% | | | |
| է. այն ծնողների տոկոսը, որոնք օգտվում են նախարարության, համայնքի, հաստատության և կրթական այլ կայքերից: | ԿԳՄՍ նախարարության կայք<br>Գյումրու համայնքապետարանի կայք<br>Այլ կրթական կայքեր | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | 30% | 30% | 10% |

Կից՝

*     լուսանկարներ և ծնողական խորհրդի հանդիպումների քանակը և արձանագրությունների լուսապատճենները,

**   թղթային կամ առցանց հարցման  արդյունքները՝ աղյուսակներով,

***  թղթային կամ առցանց հարցման արդյունքները՝ աղյուսակներով:





# Արձանագրություն թիվ 1

2024թ-ի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ <<Լիանա-մսուր մանկապարտեզ>>ՀՈԱԿ –ի ծնողական խորհրդի նիստ,մասնակցությամբ ծնողական խորհրդի 4 անդամների և տնօրենի:

Օրակարգում՝

1. Ծնողական խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:
2. Տնօրենի հաղորդումը մանկապարտեզի գործունեության և հեռանկարային ծրագրերի մասին: ( Հաղորդող՝ տնօրեն Ս.Դարբինյան)
3. Ծնող կոմիտեի տարեկան թեմատիկ հանդիպումների պլանի հաստատում
4. Ընթացիկ հարցեր:

1. Օրակարգի առաջին հարցի շուրջ լսեցին տնօրեն ՝Ս.Դարբինյանին,ով ներկայացրեց ծնողական խորհրդի նախագահի ընտրության կարգը,ըստ որի թեկնածուներից մեկը փակ քվեարկությամբ ընտրվելու է ծնողական խորհրդի նախագահ:

2. Օրակարգի 2-րդ հարցի շուրջ լսեցին տնօրեն՝Ս.Դարբինյանին,ով խոսեց մանկապարտեզի գործունեությանը վերաբերող հարցերի վերաբերյալ:

Նա իր խոսքում նշեց, որ 2024թվականի գարնանը <<Դեպի Հայկ Հիմնադրամ >> ՀԿ աջակցությամբ հիմնովին վերանորոգվել է մեկ խմբասենյակի ննջարան, սակայն մանկապարտեզում կան շատ չլուծված խնդիրներ, որոնցից մեկը շենքի հին պատուհանների և դռների ՝ նորերով փոխարինելու հարցն է, որի լուծման նպատակով կրկին դիմելու է Գյումրու համայնքապետարան:

Արտահայտվեցին ծնողներ՝ Հ.Սարգսյանը և Կ.Կարապետյանը:

Նրանք կարծիք հայտնեցին այն մասին, որ երեխաների բարեկեցիկ առօրյայի կազմակերպման համար շատ կարևոր են շենքային պայմանները, նշեցին, որ հին և խարխլված պատուհանների պատճառով ձմռանը դժվար կլինի ապահովել նորմալ ջերմաստիճան,որը համարում են շատ կարևոր:

3. Ծնող կոմիտեն քննարկեց և պլանավորեց թեմատիկ հանդիպումները:

4.Ընթացիկ հարցերի շուրջ լսեցին ծնող՝ Ռ.Մուրադյանին,ով խոսեց տարբեր խմբերում անցկացվող էքսկուրսիաների մասին՝նշելով ծնողների մասնակցության դերի և նշանակության մասին այդ գործում:

Արտահայտվեց Լ.Պետրոսյանը:

Նա առաջարկեց իր աջակցությունը երեխաների տեղափոխության հարցում:

## ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել տնօրենի կողմից ներկայացրած ծնողական խորհրդի ընտրության կարգը և անցկացնել փակ քվեարկություն, որի արդյունքում մեկ ուսումնական տարի լիազորությունների ժամկետով հաստատության ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Հ.Սարգսյանը, իսկ քարտուղար՝ Ն.Եգանյանը :
2. Հանձնարարել խմբերի ծնողական խորհուրդներին ՝ իրենց հնարավորությունների շրջանակներում աջակցել հաստատությանը, գտնել հովանավոր կամ դիմել որևէ ՀԿ-ի ,որը կաջակցի հաստատությանը վերանորոգման հարցերում:
3. Հաստատել 2024-2025 ուստարվա ծնող կոմիտեի թեմատիկ հանդիպումների պլանը:

4. Հանձնարարել բոլոր տարիքային խմբերի ծնողական խորհուրդներին աջակցել դաստիարակներին և մեթոդիստին էքսկուրսիաների կազմակերպման և իրականացման հարցերում:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ն.Եգանյան

Արձանագրություն թիվ 2

2024թ-ի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ <<Լիանա-մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծնողական խորհրդի նիստ, մասնակցությամբ ծնողական կոմիտեի անդամների,նախագահի և տնօրենի:

Օրակարգում՝

1. Ծնողական խորհրդի մասնակցությունը ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների օգնությունը կազմակերպելու գործին:( Հաղորդող՝ Հ.Սարգսյան )
2. Ծնողների իրավունքների, պարտականությունների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին, զեկուցող՝ Կ.Կարապետյան:
3. ՌԻսումնասիրել երեխաների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումները: (Հաղորդող՝ Ռ. Մուրադյան)
4. Ընթացիկ հարցեր

ա) Ձմռան նախապատրաստական աշխատանքներ, կազմակերպչական հարցեր:

բ) Ամանորյա միջոցառումների նախապատրաստական հարցերի քննարկում:

Լսեցին՝

1. Օրակարգի 1-ին հարցի շուրջ լսեցին Հ.Սարգսյանին, ով նշեց, որ անհրաժեշտ է ուսումնասիրել ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կարիքները և հնարավորության դեպքում աջակցություն ցուցաբերել:

Արտահայտվեց Ռ.Մուրադյանը:

Նա ողջունեց նման առաջարկը և նշեց, որ կրտսեր 1-ին տարիքային խմբում ունենն սոցիալապես անապահով ընտանիքի երեխա, ընտանիքը գտնվում է ֆինանսական ծանր վիճակում, որի պատճառով ծնողը չի կարողանում վճարել երեխայի վարձավճարը և առաջարկեց աջակցություն ցուցաբերել ընտանիքին՝գտնել հովանավոր կամ դիմել ծնողներին օգնության նպատակով:

2. Օրակարգի 2-րդ հարցի շուրջ լսեցին ծնողական խորհրդի անդամ Կ.Կարապետյանին, ով խոսեց ծնողների իրավունքների,պարտականությունների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին:

Արտահայտվեց Ռ.Մուրադյանը

Նա իր խոսքում նշեց,որ նախադպրոցական կրթության գործընթացին, մանկավարժների կողմից իրականացվող ծնողական կրթության դասընթացներին ծնողների մասնակցությունը շատ կարևոր է և մտնում է ծնողի իրավունքների, ինչու ոչ նաև պարտականությունների մեջ:

3. Օրակարգի 3-րդ հարցի շուրջ լսեցին Ռ.Մուրադյանին, ով առաջարկեց ծնողների կողմից սահմանել հերթապահություն, որի միջոցով հետևողական կլինեն ռեժիմային տարբեր պահերին անցկացվող աշխատանքներին:

Արտահայտվեց Լ.Պետրոսյանը:
Նա ասաց,որ ճիշտ է համարում այդ մոտեցումը, քանի որ ծնողներն իրազեկված
կլինեն երեխաներին տրվող սննդի, երեխաների հետ կազմակերպվող աշխատանք-
ների մասին ,որի միջոցով հետևողական կլինեն երեխաների առողջության,
կրթության, դաստիարակության ուղղությամբ իրականցվող աշխատանքներին և
անհրաժեշտության դեպքում առաջարկություններով հանդես կգան փոփոխու-
թյուններ կատարելու համար:

4. Ընթացիկ հարցերի շուրջ խոսեց տնօրեն՝ Ս.Դարբինյանը:

ա) Նա խոսեց ձմռան նախապատրաստական աշխատանքների մասին՝ հիմնակա-
նում խմբասենյակներում անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովելու համար պա-
տուհանները թաղանթապատելու կարևորության մասին:

բ) Քննարկվեցին ամանորյա միջոցառումներին վերաբերող հարցեր:

գ) Հ.Սարգսյանին լսեցին,ով առաջարկեց հաստատությունից դուրս անցկացնել
հետաքրքիր միջոցառում ՝ավագ խմբի երեխաների մասնակցությամբ:

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հանձնարարել խմբակային ծնողական խորհուրդներին իրենց հնարավորու-
թյունների շրջանակներում աջակցել ծնողազուրկ և սոցիալապես անապահով
ընտանիքների երեխաներին:
2. Բոլոր խմբերի ծնողներին,ինչպես նաև նոր ընդունված սաների ծնողներին
իրազեկել իրենց պարտականությունների և իրավունքների մասին՝
կազմակերպելով սեմինարներ և որքան հնարավոր է շատ ծնողների ներառել
նախադպրոցական կրթության գործըն-թացին:
3. Ամեն օր երկու ծնողի մասնակցությամբ հերթապահություն իրականացնել
4. ա) Ծնողների մասնակցությունն ապահովել ձմռան նախապատրաստական
աշխատանքներում:
բ) Օգնել դաստիարակներին՝ Ամանորյա միջոցառումներին համապատաս-
խան ձևավորելու դահլիճը:
գ)<<Գրքի տոն>>-ին նվիրված կազմակերպել այց դեպի մարզային գրադարան:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ն.Եգանյան

Արձանագրություն թիվ 3

2025թ-ի մարտի 14-ին տեղի ունեցավ <<Լիանա-մուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծնողական խորհրդի նիստ՝ ծնողական խորհրդի բոլոր անդամների,տնօրենի և մեթոդիստի մասնակցությամբ:

Օրակարգում

1. Երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, դաստիարակների խրախուսման վերաբերյալ առաջարկությունների մասին քննարկում:
2. Ծնողներին մասնակից դարձնել տարիքային տարբեր խմբերում անցկացվող բաց պարապմունքներին:
3. Ընթացիկ հարցեր.
   ա) Այցելություն Շիրազի տուն-թանգարան:
   բ) Ծնողներին մասնակից դարձնել մանկապարտեզում կազմակերպվող շաբաթօրյակին, գարնանային միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին:

Լսեցին՝

Օրակարգի 1-ին հարցի շուրջ լսեցին Ռ.Մուրադյանին, ով ներկայացրեց ավագ խմբի ծնողների հայտնած գոհունակությունը դաստիարակ՝ Գայանե Գրիգորյանի՝ նրա կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների և կազմակերպած միջոցառումների համար:

Օրակարգի 2-րդ հարցի շուրջ լսեցին մեթոդիստ Տ.Սարգսյանին, ով ներկայացրեց խմբերում տեղի ունեցող բաց պարապմունքների մասին և խոսքում նշեց, որ ցանկալի է ծնողների մասնակցությունը բաց պարապմունքներին, որոնց միջոցով ավելի տեղեկացված կլինեն երեխաների տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքների,հմտությունների, կարողությունների մասին:

Արտահայտվեց Կ.Կարապետյանը:

Նա ևս կարևորեց ծնողների մասնակցությունը բաց պարապմունքներին և նշեց, որ դա մեծ հնարավորություն է երեխաների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու համար:

4. ա) Ընթացիկ հարցերի շուրջ լսեցին Հ.Սարգսյանին, ով խոսեց մանկապարտեզից դուրս կազմակերպվող այցերի, էքսկուրսիաների, հավաքների կարևորության մասին:
   բ) Նա նաև խոսեց գարնանային միջոցառումների նախապատրաստական աշխատանքների մասին՝ տեղեկացնելով առաջիկա շաբաթ օրը կազմակերպվող շաբաթօրյակի մասին:

   Արտահայտվեց Ա.Բերնեցյանը:

   Նա հանդես եկավ առաջարկությամբ, որ մայրիկների տոնին ընդառաջ կարելի է կազմակերպել որևէ նպատակային այց՝ հաստատությունից դուրս:

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքների հետագա աշխատանքների բարելավման նպատակով երեխաների և ծնողների փոխհա-

բաբերությունների սերտացման և ուսուցման արդյունավետության համար տնօրենին առաջարկել ծնողների կողմից պատվոգիր տալ ավագ խմբի դաստիարակ Գ.Գրիգորյանին՝ խրախուսելու իր պարտականությունների կատարման ընթացքում ակնառու հաջողությունների հասնելու համար:

2. Ներգրավել ծնողներին և ակտիվ մասնակցություն ցուցաբերել բաց պարապմունքներին:
3. ա) Կազմակերպել այց Շիրազի տուն-թանգարան:
   բ) Ներգրավել ծնողներին առաջիկա շաբաթ օրը կազմակերպվող շաբաթօրյակին, ինչպես նաև գարնանային միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին:
   գ) Կազմակերպել այց քաղաքային գրասայգի:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ն.Եգանյան

# Արձանագրություն թիվ 4

2025թ-ի մայիսի 29-ին տեղի ունեցավ <<Լիանա-մուր մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի ծնողական խորհրդի նիստ, մասնակցությամբ ծնողական խորհրդի բոլոր անդամների, նախագահի և տնօրենի:

Օրակարգում

4. Տարիքային տարբեր խմբերում անցկացնել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կարիքների գնահատում : ( Հաղորդող՝ Ս.Դարբինյան)
5. Ծնողներին մասնակից դարձնել ամառային կոփիչ միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպման աշխատանքներին:
6. Ընթացիկ հարցեր՝
   ա) Հունիսի 1-ի միջոցառման նախապատրաստական աշխատանքներ:
   բ)Ավագ տարիքային խմբի հրաժեշտ մանկապարտեզին նվիրված միջոցառման նախապատրաստական աշխատանքների մասին քննարկում:

Լսեցին՝

3. Օրակարգի 1-ին հարցի շուրջ լսեցին տնօրեն՝ Ս.Դարբինյանին, ով ներկայացրեց մանկապարտեզ հաճախող սոցիալապես անապահով երեխաների կարիքները:

Արտահայտվեց Ա.Բերնեցյանը:

Նա նշեց, որ խմբերից մեկի ծնողներն առաջարկել են նյութական օգնություն ցուցաբերել կրտսեր 1-ի խմբի սոցիալապես անապահով ընտանիքի երեխային և իրենք պատրաստ են օգնություն ցույց տալ նաև մյուս երեխաներին, ովքեր ունեն դրա կարիքը:

2. Օրակարգի 2-րդ հարցի շուրջ լսեցին ծնողական խորհրդի նախագահ՝ Հ.Սարգսյանին, ով խոսեց ամառային կոփիչ միջոցառումների և էքսկուրսիաների կարևորության մասին:Նա նշեց, որ էքսկուրսիաների նպատակը երեխաների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, որը նպատակաուղղված է նրանց հոգևոր , գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Արտահայտվեց Ռ.Մուրադյանը:

Նա առաջարկեց տարբեր տարիքային խմբերի հետ կազմակերպել էքսկուրսիաներ:

4. Ընթացիկ հարցերի շուրջ լսեցին տնօրեն Ս.Դարբինյանին,ով ներկայացրեց հունիսի 1-ին երեխաների պաշտպանության տոնի կապակցությամբ անցկացվող միջոցառումները, հրաժեշտ մանկապարտեզին միջոցառումը:

Արտահայտվեց Ռ.Մուրադյանը:

Նա առաջարկեց ծնողների օգնությունը հունիսի 1-ի միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների պատրաստման, դահլիճի և ձևավորման հարցերում:

ՈՐՈՇՈՒՄ Է.

4. Հավանություն տալ տնօրենի կողմից ներկայացրած սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին աջակցություն ցուցաբերելու մասին առաջարկին:

5. Ամառվա ընթացքում կազմակերպել էքսկուրսիաներ տարիքային տարբեր խմբերում՝ մասնակից դարձնելով ծնողներին:
6. Ներգրավել ծնողներին հունիսի 1-ին, ինչպես նաև հրաժեշտ մանկապարտեզին կազմակերպվող միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ն.Եգանյան

9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| Ցուցանիշ | |
|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները.<br>*(Նկարագրել համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևը, ներդրման չափը, ամսաթիվը).* | 2025թվականի ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել են շաբաթօրյակներ, աղբի տե-ղափոխում, ծառատունկ:<br>Համայնքի կողմից մանկապարտեզի միջանց-քում տեղադրվել է տաքացուցիչ,ձմռանը մի-ջանցքներում անհրաժեշտ ջերմության ապահովման նպատակով: |
| բ.համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հաստատության աշխատակազմի տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը.<br>*(Նկարագրել հաստատության աշխատակազմի մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը (վերջին 3 տարում).* | Մանկապարտեզի ողջ աշխատակազմը( 100% ) մասնակցել է համաքաղաքային շաբաթօրյակներին: |
| գ. ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից սաների և ծնողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը.<br>*(Նկարագրել հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, մասնակից սաների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. (վերջին 3 տարում).* | 2022-2023 ուստարում հունիսի 1-ին Գյումրու Կամերային Դահլիճում տեղի է ունեցել մի-ջոցառում, որտեղ իրենց ելույթով հանդես են եկել ավագ խմբի երեխաները:<br>2023-2024 ուսումնական տարում Գյումրու Վարդանանց Հրապարակում ուսումնական հաստատության ավագ խմբի սաների մաս-նակցությամբ անցկացվել է աշխարհահռչակ երգչի՝ Շառլ Ազնավուրի 100 ամյակին նվիր-ված միջոցառում,որտեղ երեխաները հանդես են եկել պարով:Այս միջոցառմանը մասնակցել են մեծ թվով ծնողներ: |
| դ.ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակիցների թիվը՝ ըստ ծրագրերի.<br>*(Նկարագրել կրթական ծրագրերը, որոնք իրականացնում են հաստատությունը և ՀԿ-ները համատեղ, ծրագրի տևողությունը, թիվը, մասնակից սաների և աշխատակիցների թիվ).* | 2022թվականի դեկտեմբերից հաստատու-թյունը համագործակցել է Կարիտաս Արեգակ Հիմնադրամի Էմիլի Արեգակ Կենտրոնի հետ,որն իրականացրել է ՀՀ-ում ուժեղ ՔՀԿ-ներ և տեղական գործընկերություններ հաշ-վետու համայնքների և ներառական, սոցիա-լական պաշտպանության ծրագիրը՝վեց աշ-խատակիցների մասնակցությամբ 1 տարի ժամանակով:<br>2025 թվականի մայիս ամսից համագործակցել ենք<< Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության հետ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են այցելություններ տարբեր մանկապարտեզներ՝ բաց պարապմունքներին մասնակցելու , |

| | |
|---|---|
| | ուսումնադաստիարակչական աշխատանքնե-րին ծանոթանալու և փորձի փոխանակման նպատակով: |
| ե.ուսումնական հաստատությունը համագործակցում է իրեն սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ. | ՈՒսումնական հաստատությունը համագոր-ծակցում է Շիրակի Տարածքային մանկավար-ժահոգեբանական կենտրոնի՝ ՏՄԱԿ-ի հետ: |
| զ.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքում գործող բժշկական հաստատության հետ՝ ԿԶԱՊԿ ունեցող երեխաների հայտնաբերելու եւ ն/դ կրթության մեջ ներգրավելու նպատակով. | Հաստատությունը չի համագործակցել որևէ գործող բժշկական հաստատության հետ: |
| է.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքի հանրակրթական դպրոցների հետ՝ իր սաների սահուն անցումը կրթական հաջորդ մակարդակ ապահովելու նպատակով. | Ավագ խմբի սաներն այցելել են մոտակա տարածքում գտնվող Գյումրու թիվ 24, թիվ 4 դպրոցներ՝ մանկապարտեզ-դպրոց սահուն անցումն ապահովելու նպատակով: |

## 10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի, միջոցառման և գույքի առկայության մասին. |
|---|---|
| ա. ուսումնական հաստատությունում բոլոր սաների համար հասանելի եւ հավասարապես որակյալ կրթության կազմակերպման նպատակով հաստատության տարեկան պլանում սահմանված են գործողություններ.<br>*(Եթե այո, ապա կատարել հղում).* | 2024-2025 ուստարվա ՆՈՒՀ-ի տարեկան աշխատանքային պլանում Մեթոդական աշխատանք կադրերի հետ, Մեթոդ ժամեր բաժիններում ընդգրկված աշխատանքների միջոցով ապահովվել է որակյալ կրթության կազմակերպումը տարիքային բոլոր խմբերում: |
| բ. ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանում ներկայացված են ԿԶԱՊԿ ունեցող սաների կրթության կազմակերպման որակի բաձրացմանը նպաստող միջոցառումներ, այդ թվում՝ մանկավարժների, դաստիարակների օգնականների վերապատրաստումներ.<br>*(Եթե այո, ապա թվարկել համապատասխան միջոցառումները).* | 2024-2025 ուստարվա ՆՈՒՀ-ի տարեկան աշխատանքային պլանում՝ նախատեսվել և անցկացվել է <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների առանձնահատկությունները>> թեմայով խորհրդատվություններ մանկավարժական անձնակազմի հետ:<br>2024-2025 ուստարվա տնօրենի աշխատանքային պլանում՝Մեթոդ ժամեր բաժնում սահմանվել և անցկացվել է <<Ավազաթերապիայի ազդեցությունը նախադպրոցականի հոգեկան զարգացման վրա >>,<< Մաթեմատիկական տարրական պատկերացումների ուսուցումը հեքիաթի միջոցով>>թեմաներին առնչվող հարցերի շուրջ քննարկում: |
| գ.վերջին հինգ տարում մանկավարժական աշխատողները մասնակցել են վերապատրաստումների, այդ թվում՝ «Համընդհանուր ներառական կրթություն» թեմայով.<br>*(Եթե այո, ապա նշել վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել դրա արդյունավետությունը).* | Մասնակցել են Վորլդ Վիժն ծրագրի կողմից կազմակերպվող վերապատրաստման հետևյալ դասընթացներին՝<br><br>2021թ-ին Teaching Academy Training Centre – ի կողմից անցկացված <<Ինչպես պլանավորել և իրականացել երաժշտական դաստիարակությունը ՆՈՒՀ-ում՝նպատակներ,խնդիրներ, գործունեության ձևեր:<br>2022թ-ի օգոստոսի 13-ից սեպտեմբերի 9-ը մասնակցել են <<Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն>> Հիմնադրամի կողմից անցկացված նախադըպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների համար իրականացված վերապատրաստման դասընթացին:<br>2023թ-ին Teaching Academy Training Centre – ի կողմից անցկացված <<Մեթոդիստի ուսումնամեթոդական աշխատանքի կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում>>թեմայով վերապատրաստման դասընթաց:<br>2024թվականի հունվարի 17-ին Շիրակի |

| | |
|---|---|
| | ՏՄԱԿ-ում անցկացվել է << ԱՌԻՁՊ-ի վարման կարգը >>թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են մեկ դաստիարակ և մեթոդիստ:<br>2024թվականի փետրվարի 23-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է << Կոգնիտիվ ռիթմիկա, բարձրագույն հոգեկան գործընթացներ ակտիվացում, ռիթմոթերապիա>> թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են մեկ դաստիարակ և մեթոդիստ:<br>2024թվականի փետրվարի 26-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է << Հուզական ինտելեկտ >>թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են մեկ դաստիարակ և մեթոդիստ:<br>2024թվականի մայիսի 10-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է << Հեքիաթաթերապիան՝ որպես 3-18 տարեկանների հոգեբանական և լոգոպեդական խնդիրների հաղթահարման միջոց>>թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են տնօրեն,մեկ դաստիարակ և մեթոդիստ:<br>2024թվականի մայիսի 20-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է << Աուտիզմի ժամանակ դրսևորվող վարքային խնդիրները>>թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են դաստիարակները և մեթոդիստը:<br>2024 թվականի հունիսի 21-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է << Դրական ծնողավարում>>թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են մանկապարտեզի ծնողներ:<br>Վերապատրաստումների արդյունքում մանկավարժական անձնակազմը ձեռք է բերել նոր գիտելիքներ,հմտություններ, նորարարական մեթոդներ, մոտեցումներ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու գործում:<br>2025 թվականի փետրվարի 12-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է է << Զգայական ինտեգրացիա>>թեմայով վերապատրաստում,որին մասնակցել են երեք դաստիարակ և մեթոդիստ:<br>2025 թվականի մարտի 25-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է է << Խաղը ներառող միջավայրում>> թեմայով վերապատրաստում, որին մասնակցել են չորս դաստիարակ և մեթոդիստը:<br>2025 թվականի ապրիլի 21-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է է << Աուտիզմի ժամանակ դրսևորվող վարքային խնդիրները>>թեմայով վերապատրաստում,որին մասնակցել են մեկ դաստիարակ և հինգ ծնող: |

| | |
|---|---|
| | 2025 թվականի մայիսի 21-ին Շիրակի ՏՄԱԿ-ում անցկացվել է << Հուզական այրում>> թեմայով վերապատրաստում: |
| դ. վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած դաստիարակների օգնականների թիվը.<br>*(Եթե այո, ապա նշել վերապատրաստված դաստիարակի օգնականների թիվը).* | Մեկ դաստիարակի օգնական մասնակցել է Կարիտաս Արեգակ Հիմնադրամի Էմիլի Արեգակ Կենտրոնի կողմից իրականացրած ՀՀ-ում ուժեղ ՔՀԿ-ներ և տեղական գործ-ընկերություններ հաշվետու համայնքների և ներառական, սոցիալական պաշտպանու-թյան ծրագրի շրջանակներում անցկացվող վերապատրաստմանը: |

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին |
|---|---|
| ա. ուսումնական հաստատությունում ամենուրեք (խմբասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն)տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն.<br>*(Եթե այո, ապա նկարագրել ինչպիսի պայմաններ են ստեղծված տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիության ապահովման համար).* | Հաստատությունում ֆիզիկական մատչելիություն ապահովված չէ տե-ղաշարժման տարբեր խնդիրներ ունե-ցող անձանց համար: |
| բ. ուսումնական հաստատությունն ունի ԿԶԱՊԿ ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցմանկավարժ, հոգեբան և այլն).<br>*(Եթե այո, ապա թվարկել հոգեբանամանկա վարժական աջակցության հաստիքները, նշել ինչպես է կազմակերպվում նրանց աշխատանքը: Նկարագրել նաև ներառականության ուղղությամբ համապատասխան աշխատողների պարտակա-նությունների շրջանակը, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող սաների հետ վարվող աշխանքները, լրացուցիչ հաստիքների կարիքը և այլն: Հաշվարկել մանկավարժա-հոգեբանական աջակցության թիմի աշխատակիցների թվի հարաբերակցությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների թվին):* | ՈՒսումնական հաստատությունը չու-նի ԿԶԱՊԿ ունեցող սաների մանկա-վարժահոգեբանական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցման-կավարժ, հոգեբան և այլն). |
| գ. ԿԶԱՊԿ ունեցող սաներն ապահովված են ֆիզիկական և ճանաչողական զարգացման համար անհրաժեշտ խաղային նյութերով, պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով.<br>*(Եթե այո, ապա թվարկել, թե ինչ ուսումնամեթոդական նյութեր ունի հաստատությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների համար, դրանց քանակը, ձեռք բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման հաճախականությունն ու արդյունավետությունը և այլն: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).* | Հաստատությունում ԿԶԱՊԿ ունեցող սաների համար 2024 թվականին ձեռք են բերվել ԿԶԱՊԿ ունեցող սաների ֆիզիկական և ճանաչողական զարգ-ացման համար անհրաժեշտ զարգաց-նող տարբեր տեսակի և բնույթի խա-ղեր, կառուցողական նյութեր, պի-տույքներ, հարմարանքներ և այլ պարագաներ, որոնք նոր են և գտնվում են գերազանց վիճակում: |
| դ. ուսումնական հաստատության խմբասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԶԱՊԿ ունեցող սաները մեկուսացված չեն.<br>*(Եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար կրթության և խնամքի կազմակերպման պայմանները, խմբասենյակների* | ՈՒսումնական հաստատության խըմ-բասենյակները մաքուր են,ընդարձակ, ապահով և հարմար կահավորված: Խմբասենյակների դասավորվածու-թյունը թույլ է տալիս երեխաներին, այդ թվում ԿԶԱՊԿ ունեցող երեխա-ներին ազատ տեղաշարժվել մի կեն- |

| | |
|---|---|
| *դասավորվածությունը).* | տրոնից մյուսը,զբաղվել իրենց տարի-քին համապատասխան բազմազան և տարբեր տևողություն պահանջող աշ-խատանքներով: |
| ե. ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական եւ խմբային աշխատանքների համար. *(Եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար նախատեսված ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակը, չափերը, հագեցվածությունը սարքավորումներով, սենյակի օգտագործման հաճախականությունը: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).* | 2025 թվականին ուսումնական հաս-տատության մեթոդական սենյակը վե-րանորոգվել է, ձեռք է բերվել մեծ պահարան,որտեղ պահվել են բոլոր մեթոդական նյութերը, գրքերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների համար անհրաժեշտ պարագաները, որի նպատակն է եղել ստեղծել ռեսուրս-սենյակ՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական և խմբային աշխա-տանքների համար: |

12. ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.

| Ցուցանիշ | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի առկայության մասին |
|---|---|
| ա. անհատական ուսուցման և զարգացման պլանները մշակվում են՝ համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական ծրագրերի՝ հաշվի առնելով սաների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը.<br>*(Եթե այո, ապա մանրամասնել).* | 2024-2025 ուստարում համագործակցել ենք Շիրակի ՏՄԱԿ-ի հետ և համատեղ կազմվել է 3 սանի համար անհատական ուսուցման և զարգացման պլան՝ համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական ծրագրերի: 2024-2025 ուստարում երեք սանի հետ աշխատել են հոգեբան, սոց-մանկավարժ և լոգոպետ:Իրականացված աշխատանքները դրական ազդեցություն են ունեցել սաների կրթության և զարգացման վրա՝ ապահովելով ԱՈՒՋՊ–ով սահմանված վերջնարդյունքները: |
| բ.մանկավարժները գիտակցում են ներառականության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում են իրազեկման եւ կարծրատիպերի կոտրմանն ուղղված աշխատանքներ.<br>*(Մանկավարժների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում).* | Տարվա ընթացքում մանկավարժական անձնակազմի, սպասարկող անձնակազմի, ծնողների մասնակցությամբ իրականացրած ժողովների,հանդիպումների, խորհրդատվությունների,վերապատրաստումների արդյունքում ձևավորվել են նոր մոտեցումներ, ընդհանուր վերաբերմունք առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:: |
| գ. մանկավարժներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և առանձնահատկություններից.<br>*(Մանկավարժների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում).* | Հաստատության մանկավարժները ընդունում են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին այնպես, ինչպես բոլորին, նույնկերպ գովում են, պահանջում և գնահատում: |

| | |
|---|---|
| դ. մանկավարժները կարողանում են կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել և ուսումնական նյութերում և  հաղթահարել նույնիսկ սեփական վարքագծում.<br>(Ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը  հայտաբերելու և հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի,   ինչպես նաև ծնողների շրջանում): | Հաստատությունում  գրեթե  բոլոր մանկավարժները պատրաստ  են օգնելու, ապահովելու  առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին որակյալ և արդյունավետ կրթություն՝ուսուցման պրոցեսի ընթացքում  հաշվի  առնելով  նրանց առանձնահատկություններն ու հնարավորությունները: |

13. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության այն սաների թիվը և տոկոսը, որոնք ունեն ԿԶԱՊԿ. | 1/1% | 2/2% | 3/3,4% |
| բ. ԿԶԱՊԿ ունեցող սաների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ օր/սան. | 16 | 45/2 | 20/3 |
| գ. լրացուցիչ կրթական ծրագրերում ներառվող՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների թիվը և տոկոսը. | 0 | 0 | 0 |

14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2024-2025 ուստարի |
|---|---|---|---|
| ա. սեռերի հարաբերակցությունը | 57տղա/35աղջիկ | 53տղա/45աղջիկ | 66տղա/45աղջիկ |
| բ. ուսումնական հաստատությունում ընդգրկված ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը. | 0 | 0 | 0 |